ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ՊԱՐՈՆ Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հարությունյան.

Ի պատասխան Ձեր 06.05.2020թ. հ.088 գրության՝ տեղեկացվում է.

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության, Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի մասնագետների հետ համատեղ տեղում կատարված ուսումնասիրության ժամանակ պարզվել է, որ Բաշինջաղյան փակուղու (նրբանցք) կոյուղատար համակարգի խնդիրը հիմնովին լուծելու համար այն պետք է վերակառուցվի: Հաշվի առնելով, որ 2017 թվականի հունվարի 1-ից մեկնարկել է ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ծառայությունների մատուցման Վարձակալության նոր պայմանագիր, որի կողմերն են հանդիսանում Ջրային կոմիտեն՝ որպես Վարձատու և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն՝ որպես Վարձակալ, ուստի՝ ներկայացված խնդրի կարգավորումը գտնվում է Ջրային կոմիտեի և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի պատասխանատվության ներքո:

Միաժամանակ տեղեկացվում է, որ Երևանի քաղաքապետարանի 2020թ. ծրագրերով նշված հասցեում կոյուղագծի վերակառուցման աշխատանքներ նախատեսված չեն: «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի վարձակալության Պայմանագրի համաձայն՝ ջրամատակարարման և/կամ ջրահեռացման ցանցի ընդլայնման աշխատանքներ նախատեսված չեն: Ֆինանսական միջոցների առկայության դեպքում այդ աշխատանքները կարող է իրականացվել կամ համայնքի բյուջեի միջոցների հաշվին կամ ներդրումային ծրագրերի շրջանակներում՝ համապատասխան նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ